այլ այն դպրոցական նախակրթութիւնը, որ ստացել եմ ես առաջ ու առաջ Ներսիսեան դպրոցում։ Ես ամենևին երկիւղ չունեմ որ հայ միջնակարգ դպրոցից աւարտող պատանին (գիւղացի լինի թէ քաղաքացի) մի օտար լեզու ևս հասկանալով, ձեռքից ու աչքից ձգէր իր մայրենի լեզուի երկասիրութիւնները և անձնատուր լինէր լոկ օտարինին։

Ս. Բէգ-Նազարեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 10 սեպտեմբերի

Քաջ գիտենալով «Journal d'Oriant» լրագրի հայոց հարցի վերաբերեալ յօդուածների նշանակութիւնը և թէ եւրոպացիք ինչպիսի յարգանօք պիտի վերաբերվեն դէպի իրանց աչքի առաջ դրված հարցը, ես պարտքս համարեցի դիմելու իմ ծանօթ ու անծանօթ անձինքներին, որպէս զի չը խնայեն իրանց լուման յօգուտ հայոց դատը պաշտպանող Վիէննայի լրագրի։ Ընդ սմին առաջարկում եմ նուիրատու պարոնների ցուցակը, որին և խնդրում եմ, յարգոյ խմբագիր, տեղ տաք ձեր պատուական «Մշակ» լրագրի համարներից մէկում ի գիտութիւն նուիրատու անձանց։

Յովհաննէս Թումեանց 2 րուբլի, Արամ Սահաթսազեանց 3 ր., Աւետիք Արղումանեանց 2 ր., Յովհաննէս Մելքումեանց 2 ր., Աւետիս Ղարախանեանց 2 ր., Ստեփան Ռափայելեանց 2 ր., Յակովբ Ակոբեանց 50 կոպէկ, Յակովբ Յովսէփեան Ակոբեանց 1 ր., Կարապետ Մըսրլեանց 2 ր., Բագրատ Սարաջ-Գուրգենեանց 1 ր., Գրիգոր Սարաջ-Գուրգենեանց 1 ր., Նիկողայոս Ղալումեանց 1 ր., Գէորգ Ռափայելեանց 3 ր., Յովհաննէս Ռափայելեանց 1 ր., Գէորգ Տէր-Աբրահամեանց 1 ր., Յովհաննէս Նազարեանց 1 ր., Բաղդան Արուշանեանց 2 ր., Գէորգ Մուրադեանց 1 ր., Սողոմոն 1 ր.։

Ընդամէն գումարն է 29 րուբլ 50 կոպ., բարեհաճեցէք հասուցանելու ուր հարկն է։

Բաղդան Արուշանեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 12 սեպտեմբերի

Բացի այն միջոցից, որ պ. Աբր. Ամիրխանեանցը իմացել է Գօրի եղած ժամանակ շան կծածից ազատվելու համար («Մշակ» № 158), կայ և մի այլ միջոց, որ պարտաւորութիւն եմ համարում յայտնել լրագրութեամբ և դարձնել մեր բժիշկների ուշադրութիւնը դրա վրա։

Այս տարի մինչ ես գնացած էի ամարանոց իմ հայրենիքը՝ Սանահին, մի գիւղացու շունը կատաղեց և յանկարծակի վրա ընկնելով կծեց իր տիրոջ։ Մի քանի օրից յետոյ շան տիրոջ գլուխը սկսում է պտոյտ գալ, որ առաջին նշանն է վնասվելու։ Բացի իր տիրոջից վնասել էր մի քանի այլ մարդոց և երեք գոմէշի։ Բոլոր վնասվածներին ազատեցին այսպէս։ Դաշտերում տեղ տեղ մուք մաւի փոքր ծաղիկների վրա ամառը և գարնանը նստած են լինում մի տեսակ փոքրիկ չալ գոյնով կենդանիք, որոց մեր գիւղացիք անուանում են ալաքըլունգ, (կարծեմ Թուրքերէն բառ է)։ Վարդավառի օրը (գիւղացիների կարծիքով ուրիշ օր անկարելի է) առանց ոչոքի հետ խօսելու գիւղացին գնում է դաշտը, հաւաքում է այդ կենդանիքը և բերում տուն։ Եթէ մարդ է վնասվածը այն ժամանակ այդ կենդանիք չորացնում, մանրացնում են, ջրի հետ խառնած խմեցնում 2 կամ 3 օր օրական երեք անգամ։ իսկ եթէ անասուն է վնասվածը, կենդանին առանց մանրացնելու հացի մէջ փաթաթում և ուտեցնում են վերև յիշած եղանակով։

Սակայն չը պէտք է մոռանալ, որ այդ բոլորը հարկաւոր է անել շան կծելու օրից մինչև քառասուն երրորդ օրը, իսկ եթէ այդ ժամանակամիջոցը անցնի առանց հոգալու, այլ ևս չէ կարելի ազատվել ալաքըլունգով։ Այդ միջոցը ընդհանրացած է Լոռու գաւառում, ուր հարիւրաւոր մարդիք ազատված են դրանով։ Խորհուրդ կը տայինք մեր բժիշկներին հետազօտելու այդ միջոցը, քանի որ հեշտ է ձեռք բերել այդ կենդանիներից։

Հետաքրքիրը այն է, որ մի երկու անգամ խմելուց յետոյ մարդիք միզում են մէկ կամ երկու անգամ արիւն։ Թէ ինչից է այս, ես չեմ կարող ասել ոչինչ. Թող լուծեն մեր բժիշկները։

Իշխան Յ. Գ. Արղութեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Ղարս, 6 սեպտեմբ.

Ուղարկելով երեք հարիւր տասն և երեք րուբլ «Ժուռնալ դ՚Օրիան» լրագրին հասուցանելու և բաժանորդների ցուցակը, խոնարհաբար խնդրեմք տեղ տալ ձեր պատուական լրագրում բաժանորդների ազգանուններին։ Փոստի ծախսը տուեցին Ս. Ղամազեանց և Ալէքսանդր Վարդանեանցը։

Խաչատուր Խասեանց 8 ր., շտաբս կապիտան Ս. Ղամազեանց 8 ր., Նազար Խուդաւեանց 8 ր., Սամսոն Պապաջանեանց 8 ր., Ալէքսանդր Ջնգարեանց 4 ր., Յարութիւն Երզնկեանց 4 ր., Միրզոյեանց 4 ր., Սարգիս Բաղդասարեանց 8 ր., Պօղոս Գոնիմիկեանց 4 ր., Մատթէոս Բաղրամեանց 4 ր., Տիգրան Գօզալեանց 8 ր., Թայիրեանց և Անանիկեանց 8 ր., Յովհաննէս Մուռուսեանց 4 ր., Պետրոս Յարութիւնեանց 8 ր., Բաղդասար Գօլթօխչեանց 4 ր., Զաքար Ջանփոլադեանց 8 ր., Գալուստ Մանուկեանց 4 ր., Աղաբէգ Բաղջուղլեանց 4 ր., Սարիբէգ Մկրտումեանց 4 ր., Գաբրիէլ Յարութիւնեանց 4 ր., Գրիգոր Սրօրչչիկեանց 4 ր., Մելքումեանց 8 ր., Ս. Բէգթաշեանց 25 ր., Աւետիս Մխիթարեանց 4 ր., Տիգրան Բոստանջեանց 4 ր., Սէլիմեանց 4 ր., Աղէքսանդր Լալայեանց 4 ր., Կիրակոս Վարթիկեանց 3 ր., Գէորգ Խոսրովեանց 1 ր., Սարգիս Մանուսաջեանց 1 ր., Նիկալայ Խասհակեանց 4 ր., Յովհաննէս Սուջեանց 8 ր., Յարութիւն Մովսէսեանց 8 ր., Արիստակէս Մըրխճեանց 8 ր., Մարգար Օլթեցեանց 2 ր., Նազարէթ Արապեանց 8 ր., Մկրտիչ Նալբանդեանց 4 ր., Յարութիւն Այվազեանց 8 ր., Գէորգ Գրիգորեանց 4 ր., Սահակ Գունեամալեանց 8 ր., Աբիսողոմ Ալօեանց 2 ր., Աղէքսանդր Ջալթիկեանց 4 ր., Պետրոս Պետրոսեանց 8 ր., Ղարագիւլեանց 4 ր., Օհանջան Վարդպատրիկեանց 4 ր., Մելք Պապիեանց 2 ր., Գրիգոր Դրաբեանց 8 ր., Պօղոս Կարապետեանց 4 ր., Գէորգ Գալուստեանց 4 ր., Յարութիւն Շահբասեանց 4 ր., Կրասինիկեանց 8 ր., Գէորգ Այնաւուրեանց 4 ր., Յովսէփ Մարջանեանց 4 ր., Ալեքսանդր Վարդանեանց 4 ր., Մկրտիչ Մելիքեանց 4 ր., Համբարձում Քարտաշեանց 4 ր., ալէքսանդրապօլցի հայ ումն 5 ր.։ Ընդամէնն է 313 րուբլ։

Ս. Ղամազեանց, Ն. Խուդաւեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Տպում ենք Ղարսից յօգուտ Վիէննայի լրագրի ուղարկած 313 րուբլ գումարի նուիրողների ցուցակը, որ բացի 13 ր., արդէն վաղուց հաշւած է ընդհանուր գումարի մէջ։ Բացի սորանից Թիֆլիսից պ. Արուշանեանցի ձեռքով ստացանք յօգուտ նոյն լրագրի 29 ր. 50 կոպ.։ Ուրեմն առաջվայ փողի հետ կանի 1068 ր. 50 կ.։

—

Մեզ գրում են ՔՈՒԹԱՅԻՍԻՑ որ հնագիտական ժողովի գիտնականները, որոնք մի երկու օրով գնացին Քութայիս, շատ լաւ ընդունվեցան այդ քաղաքում։ Հայոց հասարակութիւնը Քութայիսում նոյնպէս մեծ պատրաստութիւններ էր տեսել հայ գիտնականների համար, բայց դժբաղդաբար պ. պ. Էմին և Պատկանեան չը գնացին Քութայիս։ Հրէայ հասարակութիւնն էլ մեծ փառքով ընդունեց հրէայ գիտնական Խվօլսօնին։

—

Շնորհակալութեամբ ստացանք պ. պրոֆէսոր Պատկանեանից «Revue critique Internationale» ֆրանսիական հրատարակութեան № 2, որի մէջ կայ, ի միջի այլոց, և նոյն իսկ Պատկանեանի յօդուածը Փիւսարի քիւրդ-ֆրանսիերէն բառարանի մասին։

—

Մեզ հեռագրում են ԻԳԴԻՐԻՑ, որ Վանի անգլիական հիւպատոս պ. Կլէյտոն եկել է Իգդիր և այս օրերս համնելու է Թիֆլիս։

—

Վիէննայի «Journal d'Orient» լրագիրը իր 38 համարի մէջ հաղորդում է որ Կ. Պօլսի «Ջէրիդէի Հավադիս» Թիւրք լրագիրը մատնել է Վիէննայի Թերթը Թիւրք կառավարութեանը և պահանջում է որ այդ լրագրին արգելվի մուտքը Թիւրքաց հողի վրա, որովհետև նրա պաշտպանած հայոց խնդիրը վտանգաւոր է Թիւրքիայի համար։ «Ժուռնալ դ՚Օրիան» մի սաստիկ յօդուածով պատասխանում է այդ մատնութեանը և ասում է որ այնու ամենայնիվ կը շարունակի պաշտպանել հայոց դատը։ Այդ յօդուածը մենք կարտատպենք «Մշակի» մէջ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

Գամբետտա Գոնֆլէօրի մէջ մի նոր նաւահանգստի բացման առիթով արտասանեց հետևեալ ճառը։ „Ինչ ուզում են թող ասեն, որքան կամենում են ինձ բամբասեն, միայն դուք հաւատացած եղէք, որ այս րոպէին ձեզ հետ խօսող մարդը այլ նպատակ չունի, բացի ընդհանուր շահերի պաշտպանութիւնը։ Մենք պարտաւոր ենք պաշտպանել մեր հայրենիքի շահերը, որին մենք պէտք է նուիրենք մեր աշխատանքները, եռանդը և որի համար պէտք է զոհենք մեր անձը։ Տեսնելով, թէ գիւղական ազգաբնակութիւնը ի՞նչպէս է վերաբերվում ոչ թէ մարդուն, այլ այն սկզբունքներին, որոնց նա ծառայում է, հանրապետութեանը, որ նա պաշտպանում է, կարելի է համարձակ ասել, որ Ֆրանսիայի համար նոր դարեգլուխ է սկսվում և որ իշխանութիւն ունեցող ժողովուրդը կարող է դէպի ինքը յարգանք ներշնչել թէ յաղթված կուսակցութիւնների մնացորդներին և թէ ամբողջ աշխարհին։ Դրա համար երկու պայմաններ են հարկաւոր, որոնց երբէք պէտք չէ բաժանել. ամենամեծ հաստատամտութիւն նպատակին հասնելու համար և ամենամեծ զգուշութիւն միջոցներ գործադրելու ժամանակ։ Բաժանելով այդ պայմանները, կարելի է պատահարների ենթարկվել և յաղթվել, իսկ խաղաղութեան ոգին հաստատամտութեան և խոհեմութեան հետ միացնելով, բռնութիւն գործ չը դնելով, այլ դիմելով մարդկերանց բանականութեանը, աշխարհի այդ իսկական թագաւորին, կարելի է ամեն բանի հասնել։ Ժողովրդի և նրա ընտրեալների մէջ համերաշխութիւնը ոյժ և հեղինակութիւն է կազմում, որովհետև այդ ընտրեալներին ժողովուրդն է նշանակութիւն տուել։ Բայց այդ չէ նշանակում, որ հարկաւոր է ենթարկվել ամբոխի րոպէական կապրիզներին։ Ընդհակառակը հարկաւոր է ժողովրդին միշտ ճշմարտութիւն ասել, հաւատացած լինելով, որ նրա խղճի խորքերի մէջ եղած բանականութեան և հայրենասիրութեան լոյսը կը ստիպէ նրան հասկանալ, թէ ո՞վ է ճշմարիտ, արդար և իրաւացի։ Յանուն այդ համերաշխութեան հաստատամիտ լինենք, յուսանք և մենք ամեն բանի կը հասնենք։“

Նէյբուրգի մէջ Գամբետտա ասել է հետևեալը. „1875 Թուականին պարլամենտական և օրինաւոր ճանապարհով հաստատված հանրապետութիւնը կատարեց իր կոչման մի մասը, այսինքն հանրապետական կառավարութեան իշխանութիւնը անվիճելի դարձրեց ամբողջ Ֆրանսիայի մէջ։ Այժմ, երբ այդ իշխանութիւնը հաստատված է երկրի մէջ և յարգված է օտար պետութիւններից, հանրապետութիւնը մի այլ գործ ունի, որ նրան յանձնել է երկիրը, նա պէտք է կատարի իր պարտականութիւնները դէպի այն մարդիկ, որոնք նրան հաւատացել են, պէտք է մտցնի երկրի մէջ այն վերանորոգութիւնները, որոնց պահանջում է հասարակական կարծիքը։ Անկարելի է ամեն բան մի անգամից կատարել։ Իմ կարծիքով, Ֆրանսիան չէ ցանկանում միանգամից բարձրացնել բոլոր հարցերը և նրանց մի անգամից վճռել։ Երկիրը կամենում է, որ մենք առաջ մի հարց բարձրացնենք, նուիրենք նրան մեր բոլոր ուշադրութիւնը, ուսումնասիրենք նրան և այնուհետև վճռենք։ Ես խորհուրդ եմ տալիս այդ գործնական քաղաքականութեանը հետևել։ Իւրաքանչիւր օր պէտք է իր գործն ունենայ և ոչ թէ բոլոր գործերը միասին։ Ինձ կասեն, որ այդպիսի քաղաքականութիւնը նեղ է, որ պէտք է ընդարձակ վերանորոգութիւններ մտցնել։ Համաձայն եմ. բայց ես գիտեմ այնպիսի ժամանակ, երբ աշխատել են վերանորոգել աշխարհը հրովարտակներով և դրա համար շատ թուղթ են փչացրել, իսկ դրանց հետևանքը սարսափելի յետադիմութիւն է եղել։ Ես հաւատացած եմ, որ երկրի ներկայացուցիչները Բուրբոնեան պալատի մէջ հաւաքվելուց յետոյ կասեն, թէ երկրին ի՞նչ է հարկաւոր, այս կասեն և ոչ թէ կը պահանջեն, որովհետև այժմեան կառավարութեանը բաւական է ասել, որ նա կատարէ։ Պատգամաւորների ժողովի կամքի հետ ամենքը կը համաձայնվեն։“

ԲՕԼԳԱՐԻԱ

Բօլգարական պետական նոր խորհուրդը կազմված կը լինի 12 անդամներից, որոնցից չորսին պէտք է բօլգարական իշխանը նշանակէ։ Ժանդարմների թիւը լինելու է 1,513։ Սօֆիայից „Köln. Zeit.“ լրագրին հաղորդում են, որ իշխան Ալէքսանդրի կառավարութեան բռնած ընթացքը անբաւականութիւն է յարուցանում։ Շատերը գտնում են, որ նրանք սխալվել են, նոր կառավարութենից կարգապահութեան հաստատելու վրա յուսալով։ Ամենքը դատապարտում են կառավարութեան նախկին մինիստր Ցանկովին Սօֆիայից արտաքսելու համար։ Ասում են, որ եթէ նա մեղաւոր էր, պէտք էր նրան դատաստանի ենթարկել և ոչ թէ կամայականութեամբ արտաքսել Սօֆիայից։ Կառավարութեան գործադրած միջոցները առհասարակ առիթ են տալիս մտածելու, որ նա իր դրութիւնը ապահով չէ համարում։ Ճշմարիտ է բօլգարական իշխանը ընդհանուր ներումն շնորհեց քաղաքական յանցաւորներին, բայց այդ ներումն էլ կորցնում է իր նշանակութիւնը, քանի որ նա խստութեամբ պայմանաւորված է։

ԱՆԳԼԻԱ

Անգլիական լրագիրները յայտնում են հետևեալ կարծիքները կայսրների տեսակցութեան մասին Դանցիգի մէջ։ „Standart“ յայտնում է, որ այդ տեսակցութիւնը վտանգաւոր է Ֆրանսիայի և Գերմանիայի բարեկամական յարաբերութիւնների համար։ „Times“ լրագրի կարծիքով Դանցիգի տեսակցութեան ժամանակ վերականգնվեցաւ երեք կայսրների դաշնակցութիւնը, որ բոլորովին վտանգաւոր չէ Անգլիայի համար։ „Daily News“ լրագիրը այդ տեսակցութիւնը վտանգաւոր չը համարելով, հրաժարվում է հաւատալ Ֆրանսիական լրագիրների հաղորդութիւններին, իբր թէ տեսակցութեան պատճառը միայն քաղաքավարութիւնն էր։

Անգլիական լրագիրները աւելի համաձայնութեամբ են խօսում եգիպտական հարցի մասին։ Բոլորի կարծիքով եգիպտական դժուարութիւնները կարող են վերջանալ միայն Թիւրքաց զօրքերի միջամտութեամբ։ Խեդիվի ոյժերի վրա անկարելի է յոյս դը-